Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-385-21.11.2019,16.01.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 225.1-ին հոդվածում՝

1) 4-րդ մասը «տնօրինումից,» բառից հետո լրացնել «ներառյալ՝ դրանց արդյունքում ստացված պտուղների, արտադրանքի և եկամուտների վրա,» բառերով:

2) 6-րդ մասի երկրորդ նախադասությունն ուժը կորցրած ճանաչել.

3) 6-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-6.4-րդ մասերով.
«6.1. Ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրություն սահմանելիս պայմանագրում նշում է կատարվում ողջ գույքի կամ գույքի առանձին տեսակների կամ որևէ հատկանիշներով պայմանավորված գույքի խմբի մասին, որը հանդիսանալու է ապահովված իրավունքի առարկա: Ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրությունը պետք է համապատասխանի ապահովված իրավունքի առարկայի կազմում ընդգրկվող գույքի նկարագրությանը և հնարավորություն ընձեռի ողջամտորեն նույնականացնել գույքը դրա նկատմամբ բռնագանձում տարածելու պահին:
6.2. Ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրությամբ պայմանագրում ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրությունից բացի պետք է նաև նշվի պայմանագրի կնքման պահին ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր արժեքը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Պայմանագրի գործողության ընթացքում ապահովված իրավունքի առարկայի կազմը կարող է փոփոխվել, ներառյալ՝ ապահովված իրավունքի առարկայի կազմում ընդգրկվող գույքը կարող է օտարվել պայմանագրով սահմանված՝ ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր արժեքը չնվազելու պայմանով, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի գրավոր համաձայնությամբ:
6.3. Ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրություն սահմանված լինելու դեպքում ապահովված իրավունքի առարկայի կազմում ընդգրկվող գույքն օտարելու պահից այն դադարում է լինել ապահովված իրավունքի առարկա, իսկ

պայմանագրում նշված գույքի խմբին կամ գույքի տեսակներին պատկանող գույքը պայմանագրով սահմանված՝ ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր արժեքի սահմաններում դառնում է ապահովված իրավունքի առարկա, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:
6.4. Ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրություն չի կարող սահմանվել ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված (սպառողների հետ կնքվող) պայմանագրերից բխող պարտավորությունների կատարման ապահովման համար կնքվող պայմանագրերում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կնքվելիք պայմանագրերի նկատմամբ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Կ-385-21.11.2019-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 225.1-ին հոդվածում՝

1) 4-րդ մասը «տնօրինումից, բառից հետո լրացնել «ներառյալ՝ դրանց արդյունքում ստացված պտուղների, արտադրանքի և եկամուտների վրա,» բառերով:
~~ո շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~«4. Ապահովված իրավունքը տարածվում է նաև այն գույքի վրա, որն ուղղակի կամ անուղղակի առաջանում է ապահովված իրավունքի առարկայի օգտագործումից, ներառյալ՝ օգտագործման արդյունքում ստացված պտուղների, արտադրանքի և եկամուտների վրա, ապահովված իրավունքի առարկայի տիրապետումից կամ տնօրինումից, ներառյալ՝ դրանց արդյունքում ստացված պտուղների, արտադրանքի և եկամուտների վրա, ինչպես նաև ապահովված իրավունքի առարկայի ապահովագրական փոխհատուցումից, բացառությամբ օրենքով և պայմանագրով սահմանված դեպքերի:»:~~

2) 6-րդ մասի երկրորդ նախադասությունն ուժը կորցրած ճանաչել.

~~2~~3) 6-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-6.4-րդ մասերով.
«6.1. Ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրություն սահմանելիս պայմանագրում նշում է կատարվում ողջ գույքի կամ գույքի առանձին տեսակների կամ որևէ հատկանիշներով պայմանավորված գույքի խմբի մասին, որը հանդիսանալու է ապահովված իրավունքի առարկա: Ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրությունը պետք է համապատասխանի ~~պայմանագրի կնքման պահին~~ ապահովված իրավունքի առարկայի կազմում ընդգրկվող գույքի նկարագրությանը և հնարավորություն ընձեռի ողջամտորեն նույնականացնել գույքը դրա նկատմամբ բռնագանձում տարածելու պահին:
6.2. Ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրությամբ պայմանագրում ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրությունից բացի պետք է նաև նշվի պայմանագրի կնքման պահին ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր արժեքը, բացառությամբ պայմանագրով նախատեսված

դեպքերի: Պայմանագրի գործողության ընթացքում ապահովված իրավունքի առարկայի կազմը կարող է փոփոխվել, ներառյալ՝ ապահովված իրավունքի առարկայի կազմում ընդգրկվող գույքը կարող է օտարվել պայմանագրով սահմանված՝ ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր արժեքը չնվազելու պայմանով, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի գրավոր համաձայնությամբ:

6.3. Ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրություն սահմանված լինելու դեպքում ապահովված իրավունքի առարկայի կազմում ընդգրկվող գույքն օտարելու պահից այն դադարում է լինել ապահովված իրավունքի առարկա, իսկ պայմանագրում նշված գույքի խմբին կամ գույքի տեսակներին պատկանող գույքը պայմանագրով սահմանված՝ ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր արժեքի սահմաններում դառնում է ապահովված իրավունքի առարկա, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

6.4. Ապահովված իրավունքի առարկայի ընդհանուր նկարագրություն չի կարող սահմանվել ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված (սպառողների հետ կնքվող) պայմանագրերից բխող պարտավորությունների կատարման ապահովման համար կնքվող պայմանագրերում:»:

~~***Հոդված 2.*** Օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունումը «դեպքերում» բառից հետո լրացնել «եթե այլ բան սահմանված չէ օրենքով» բառերը: շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~«Գրավի իրավունքը տարածվում է գրավ դրված գույքի օգտագործման արդյունքում ստացված պտուղների, արտադրանքի և եկամուտների վրա, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:»~~:

Հոդված ~~3~~2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կնքվելիք պայմանագրերի նկատմամբ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	«Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին կետ:	Նախագծի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ օրենսգրքի փոփոխվող 225.1-ին հոդվածի 4-րդ մասը «տնօրինումից, բառից հետո լրացնել «ներառյալ՝ դրանց արդյունքում ստացված պտուղների, արտադրանքի և եկամուտների վրա,» բառերով	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	Նախագծի՝ առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 1-ին հոդվածի 2-րդ կետ	Նախագծի՝ առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 1-ին հոդվածի 2-րդ կետով (Նախագծի առաջարկվող խմբագրության՝ 1-ին հոդվածի 3-րդ կետ) նոր խմբագրությամբ շարադրվող 225.1 հոդվածի 6.1-րդ մասից հանել «պայմանագրի կնքման պահին» բառերը:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

3.	Կառավարություն	Նախագծի՝ առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 1-ին հոդվածի 2-րդ կետ	Նախագծի՝ առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրության 1-ին հոդվածի 2-րդ կետով (Նախագծի առաջարկվող խմբագրության՝ 1-ին հոդվածի 3-րդ կետ) նոր խմբագրությամբ շարադրվող 225.1 հոդվածի 6.2-րդ մասի 1-ին նախադասությունը «ընդհանուր արժեքը» բառերից հետո լրացնել», եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով» բառերով:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում դեպքերում» բառից հետո լրացնել «եթե այլ բան սահմանված չէ օրենքով» բառերը:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Չի ընդունվել:
4.	Կառավարություն	«Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին և 3-րդ հոդվածներ	Նախագծի 1-ին և 3-րդ հոդվածները «ընդհանուր արժեքը» բառերից հետո լրացնել «(առկայության դեպքում) » բառերով:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է: